ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2024թ մարտի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 783.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.2%-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով՝ 13.%-ով, իսկ 2022 թվականի մարտի 31-ի նկատմամբ՝ 4.8 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 572.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 0.01%-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 13.9 %-ով, իսկ 2022 թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.5 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 210.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.4%-ով, 2023թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 3.3%-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով՝ 8,7 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 12 մլրդ 163.1 մլն ԱՄՆ դոլար աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.7%-ով, 2023թ.մարտի 31-ի նկատմամբ՝ 11.6 %-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 30 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 626.9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝2.9 %-ով, 2023 թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 10.3%-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 30.9 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 536.1 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.7%-ով, 2023թ մարտի 31-ի նկատմամբ 4.5%-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով՝ 13.2 %ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 317.1մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.8%-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ 2.2 %-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով՝ 22.8%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 255,6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.3, %-ով, 2023 թ մարտի 31-ի նկատմամբ՝ 29.1%-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 69.3%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 210.9 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.4%-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 3.3 %-ով, իսկ 2022թ.մարտի 31-ի նկատմամբ՝ նվազելով 8.7%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 891.7 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1 %-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ՝ աճելով՝0.9 %-ով, իսկ 2022թ.մարտի 31-ի նկատմամբ նվազելով՝ 4.2%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 735.2 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.3 %-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 27.4 %-ով, իսկ 2022թ մարտի 31-ի նկատմամբ՝ 110 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 536.1 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.7 %-ով, 2023թ. մարտի 31-ի նկատմամբ 4.5 %-ով, իսկ 2022թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով՝ 13.2 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2024թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 409.9մլն ԱՄՆդոլար նվազելով 2023թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.8 %-ով, 2023թ.-ի մարտի 31-ի նկատմամբ 1.9 %-ով, իսկ 2022 թ-ի մարտի 31-ի նկատմամբ՝ 1.2%-ով:

2024թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.71%, ինչը ավել է 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.56 տոկոսային կետով, 2023թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 1.75 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից՝1.43 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.04 %, ինչը պակաս է 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.55 տոկոսային կետով, 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 1,7 տոկոսային կետով, իսկ 2022 թ, մարտի 31-ի համեմատությամբ՝ 1.33 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.25 %, ինչը 0.01 տոկոսային կետով պակաս է 2023 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2023թ.մարտի 31-ի ցուցանիշից՝ պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից 0.1 տոկոսային կետով:

2024թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 39.64 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.94 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 0.49 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 14.65 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.93 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 2.3 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 24.99 մլրդ դրամ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.01մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 1.78 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2024թ. մարտի 31-ին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 89.82 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 29.52 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 1.09 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 118.82 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 42.53 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 45.63 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -29.01 մլրդ դրամ, ինչը ավել է 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ -13.02 մլրդ դրամով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է -13.47 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2024թ. մարտի 31-ին

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 27.3 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 23.2%-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 102.1 %-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 94.64 մլն դոլարի մայր գումար, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 80.4 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 80.5 %-ով,

3) ստացվել են 23.27 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2023թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 89.3 %-ով, իսկ 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 72.3 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 121.94 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2023. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 63.4 %-ով, իսկ 2022 թ, նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 84.9 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2024թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 2 տրիլիոն 213.7 մլրդ դրամ, ինչը 2023 թ. դեկտեմբերի 31-ի, 2023թ.մարտի 31-ի և 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 120.8, 636.2 և 921.9 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2806 օր, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 126 օրով, 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 212 օրով, իսկ 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 802 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2024 թ.մարտի 31-ի դրությամբ կազմել է 7.21 %, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.19 տոկոսային կետով 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 0.71 տոկոսային կետով, իսկ 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 2.42 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2024թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.85%, ինչը ավել է 2023թ.դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 0.01 տոկոսային կետով՝ 2023թ մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 0.05 և 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է 1.69 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 17.55 %, ինչը 2023թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 1.56 տոկոսային կետով, 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ մեծ է 3.03 տոկոսային կետով, իսկ 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 7.86 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 79.6 %, ինչը 2023թ դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 1.57 տոկոսային կետով, 2023թ. մարտի 31-ի համեմատությամբ փոքր՝ 2.98 տոկոսային կետով, իսկ 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 9.55 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2022-2024թթ. մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2024թ մարտի 31-ի դրությամբ կազմել է 7.2 տարի: Այս ցուցանիշը 2023 թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.3 տարով, իսկ 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 1 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2024թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 11.2 %, որը 2023թ. մարտի 31-ի մակարդակից փոքր է 2.9 և 2022թ. մարտի 31-ի մակարդակներից մեծ է 2 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2024թ մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.9 %, լողացող տոկոսադրույքով՝ 15.1%: Ընդ որում, 2024թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2023թ. մարտի 31-ի ցուցանիշից ավել է 1.1 տոկոսային կետով, իսկ 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ ավել է 2.5 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 40 %, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2024թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 49.3 %, ներքին պարտք՝ 50.7 %: Ընդ որում, 2024 թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2023թ.մարտի 31-ի և 2022թ. մարտի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 7,6 և 19.9 տոկոսային կետերով: